

ՍԱՂՄՈՍ 66

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծոն հզոր գործերի և աղոթքի պատասխանի համար փառաբանություն	Փառք Աստծուն Իր փառահեղ գործերի համար	Փառաբանության և գոհության պատարագ	Փառաբանության երգ և գոհություն	Գոհության միասնական աղոթք
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, երգ կամ սաղմոս				
66:1-4	66:1-4	66:1-4	66:1-4	66:1-3ա 66:3բ-4
66:5-7	66:5-7	66:5-7	66:5-9	66:5-6բ 66:6գ-7 66:8-9
	66:8-12	66:8-12	66:10-12	66:10-12
66:16-20	66:13-15	66:13-15	66:13-15	66:13-14 66:15
	66:16-19	66:16-19	66»16-19	66:16-19
	66:20	66:20	66:20	66:20

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Դերեկ Զիդները, *Թիմոթեյի Հին Կտակարանյան Մեկնության Շարք* (Էջ՝ 251) գրքում վերնագրում է այս Սաղմոսը «Բոլորի Աստվածը. . . Շատերի. . . Մեկի»: Սա կարծես թե հրաշալի կերպ է այս Սաղմոսի էությունը հասկանալու համար: Այն մեկնարկում է տիեզերական շեշտադրությամբ և անցում կատարում Իսրայելի փառաբանությանը և ի վերջո մի երկրպագուի մեծարմանը:
- Բ. Այս Սաղմոս շատ նշան է իր հարակից Սաղմոսներին՝ 65 և 67-ին: Դրանք բոլորն էլ խոսում են մարդկանց հանդեպ տիեզերական Աստծո սիրո մասին: Այս կերպ նրանք շատ նման են Եսայի և Հովնան մարգարեների գրքերին:
- Գ. Այս Սաղմոսի պատմական միջավայրը անհայտ է: Ճիշտ է, որ արաբերեն /հայերեն/ թարգմանությունն ասում է «Դավթի Սաղմոս», սակայն կարծում են այս Սաղմոսը ավելի շատ համընկնում է Եզեկիա թագավորի կյանքի հետ: Սաղմոսում առկա է ազգային աղետ և անձնական ճգնաժամ: Կարծես թե այս Սաղմոսին համապատասխանում է Սենեքերիմ թագավորի գլխավորությամբ Ասորեստանի հարձակումը Երուսաղեմի վրա, այն գրավելու համար և Եզեկիայի հիվանդությունը, որը նրան կտաներ մահվան, եթե չլիներ Աստծուն ուղղված նրա աղոթալից միջնորդությունը:
- Դ. Այս Սաղմոսում առկա ութ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ Աստծուն ուղղված աղոթքներ չեն, այլ հորդորներ՝
1. երկրի բոլոր ժողովուրդները (տես՝ Սաղմ. 66:1,4,8)
 2. ովքեր վախենում/ակնածում/հարգում են Աստծուն (տես՝ Սաղմ. 66:16)

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 66:1-4

¹Ցնծության աղաղակ բարձրացրեք Աստծուն, բոլոր՝ երկրներ .

²Սաղմոս երգեցե՛ք Նրա անվան փառքին,

Նրա փառաբանությունը փառավորե՛ք:

³Ասացե՛ք Աստծուն . «Որքա՛ն ահեղ են Քո գործերը» .

Քո մեծ գործության պատճառով թշնամիներդ շողորորթում են Քո առջև:

⁴Ամբողջ երկրագունդը երկրպագելու է Քեզ,

Սաղմոս են երգելու Քեզ, սաղմոս են երգելու Քո անվանը: Սեյա:

66:1 «աղաղակ բարձրացրեք» Այս *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ՀՈԳՆԱԿԻ է և Սաղմ. 66:1 նման է Սաղմոս 100 և հիշեցնում է ինձ Հայտն. 7:9-ի գեղեցիկ երգչախմբին: Նկատե՛ք, որ ՀՈԳՆԱԿԻՆ ասում է, որ ամբողջ երկիրը պետք է ցնծությամբ աղաղակի Աստծուն (տես՝ Սաղմ. 66:1,4,9, Սաղմ. 65:2,5,8, 67:1):

Նկատե՛ք, որ այս Սաղմոսը ներառում է Աստծո ընդհանուր անունը, *Էլոհիմ* (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ), և ոչ թե Աստծո ուխտի անունը՝ ՅԱՀՎԵ: Ամբողջ աշխարհին է, որ արձագանքելու է (տես՝ Սաղմոս 67). Իսրայելի փառաբանությունը բավարար չէ (տես՝ Սաղմ. 103:1-22, 145:21, 150:6): Եթե ճիշտ է, ուրեմն կա միայն մեկ Աստված և Նա է ստեղծել ամբողջ աշխարհը, իսկ մարդուն՝ Իր պատկերով (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ), ուրեմն ակնհայտորեն ճիշտ է, որ Նա ուզում է, որ բոլոր մարդիկ հասնեն Նրա ճանաչողությանը: Իսրայելը նախատեսված էր լինելու քահանաների թագավորություն, որպեսզի ամբողջ աշխարհը բերի Աստծուն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

66:2 «Մաղմոս երգեցե՛ք Նրա անվան փառքին» Երգելու գաղափարը կամ հասկացությունը երկրպագության մեջ կարելի է արձանագրել Սաղմոսաց գրքից նմանօրինակ համարներից: Հետաքրքիր է, որ Եփես. 5:19-ում, որտեղ խոսվում է Հոգով լցվելու մասին, որ հաջորդող հինգ ԴԵՐԲԱՅՆԵՐԻՑ երեքը խոսում է երաժշտության մասին: Փառաբանությունը արժանի գործ է մեր Աստծուն երկրպագելու՝ պաշտելու մեջ:

«Անուն» տերմինը եբրայերենում անձի բնավորությունը արտացոլելու կերպ է: Այն կարող է լինել եբրայեցիների կողմից խուսափողական պատասխան հենց Աստծո անունը նշելու հարցում, և այդ իսկ պատճառով Նրա անվան հասկացությունը հաճախ փոխարինված է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»):

Հավատարիմ հետևորդները փառավորում են ՅԱՀՎԵԻ բնավորությունը և գործերը (տես՝ Սաղմ. 29:2, 79:9, 96:8): «Անունը» ներկայացնում է հենց ՅԱՀՎԵԻՆ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»):

«Փառք» տերմինի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌԶ (ՀԿ):

66:3 «Ասացե՛ք Աստծուն» Սա Սաղմ. 66:1-3-ում առկա չորրորդ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆ է, որ ուղղված է ամբողջ մարդկությանը:

1. ցնծության աղաղակ բարձրացրեք Աստծուն – BDB 929, KB 1206, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 47:1, 81:2, 98:4,6 (ԸՂՁԱԿԱՆ Սաղմ. 95:1,2)
2. երգեցե՛ք Նրա անվան փառքը – BDB 274, KB 273, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 9:11, 30:4, 47:6-7 /հինգ/, 105:2, 135:3 (ԸՂՁԱԿԱՆ Սաղմ. 18:49, 27:6, 59:16, 71:22, 75:9, 101:1, 104:33, 146:2)
3. Նրա փառաբանությունը փառավորե՛ք – BDB 962, KB 1321, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (բառացի՝ «դնել», «տեղադրել»), տես՝ Եսայի 42:12
4. ասացե՛ք Աստծուն – BDB 55, KB 65, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

❖ **«Որքան ահեղ են Քո գործերը»** «Ահավոր» կամ «սարսափելի» տերմինը (BDB 431, *Niphal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 45:4, 65:5): Որոշ թարգմանիչներ, ինչպես օրինակ Երուսաղեմի Աստվածաշունչը (JB) սա թարգմանում է «ինչ ահ ես դու ներշնչում», սակայն թվում է, թե Սաղմոս 66:5-ի պատճառով, մենք խոսում ենք ոչ թե Աստծո բնավորության մասին, այլ Աստծո գործերի մասին (տես՝ Ելից 34:10, 2 Օրինաց 10:21, Սաղմ. 65:5, 139:14, 145:6): Աստված պատմության մեջ գործել է (տես՝ Ելիցը Սաղմ. 66:5-7-ում): Նրա գործերը փրկագործություններ են և Իր նպատակների հայտնություններ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀՎՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

❖ **«Քո մեծ գործության պատճառով թշնամիների շողորրթում են Քո առջև»** Սա շատ խրթին նախադասություն է եբրայերենում թարգմանելու համար: Ըստ երևույթին Աստծո գործությունը իրեն է քաշում անգամ Նրա թշնամիների դժկամ փառաբանությունը (տես՝ Սաղմ. 18:44): Եբրայերենը կարծես թե ենթադրում է «շինձու հնազանդություն» (BDB 471, KB 469, *Piel* ԱՆԿԱՏԱՐ): Սեպտուագինտան անգամ թարգմանում է այն «տուտ»: Եբրայերեն բառն ունի մի բանի նշանակությունը, որը փոքրացել է, հպարտությունը, որը նվազել է, կամ կեղծավորություն (տես՝ Սաղմ. 81:15): Թե որ նշանակությունն է այստեղ նկատի առնվել, անհայտ է:

66:4 «Ամբողջ երկրագունդը երկրպագելու է Քեզ» Սա կարծես թե համահունչ է Փիլ. 2:9-11 միևնույն տողերի հետ, որ մի օր թե՛ թշնամին և թե՛ ընկերը, թե՛ երեխան և թե՛ մեծահասակը, ճանաչելու են ՅԱՀՎԵԻՆ: Այդ օրը բոլոր Նրան փառաբանությունն են երգելու (տես՝ Սաղմ. 22:27, 46:10, 65:2,5,8, 67:1-7, 86:9, Չաք. 14:16): Սա ունի էսկատոլոգիական նշանակություն (տես՝ Միքիա 5:2-5ա):

❖ **«Սեյա»** Այս տերմինը (BDB 699) նաև հանդիպում է Սաղմ. 66:7 և 15-ի վերջում: Տես Սաղմ. 3:2-ի գրառումը, և Սաղմոսների Ներածություն, VII:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 66:5-7

⁵ **Եկե՛ք ու տեսե՛ք Աստծո գործերը .**

Նա Իր արարքներով մարդկանց որդիների համար ահավոր է:

⁶**Ծովը ցամաքի վերածեց, գետը ոտքով անցան .**

Այնտեղ մենք Իրենով ուրախացանք:

⁷**Իր ուժով հավիտյան տիրում է .**

Նրա աչքերը դիտում են ազգերը .

Ապստամբներն իրենք իրենց թող չբարձրացնեն: Սեյա:

66:5 «Եկե՛ք ու տեսե՛ք» Այս երկու *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ համապատասխանում են Սաղմոս 66:16-ի երկու *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ հետ՝ «եկե՛ք ու լսե՛ք»: Աստված պատմության մեջ գործող Աստված է, որը ընտրել է մարդկությանը արձանագրելու և բացատրելու Իր գործերը: Մենք կարող ենք ճանաչել Աստծուն Նրա կատարած գործերով, ինչպես նաև Նրա խոսքերով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՇՆՉԱՆՔ

❖ **«Նա ահավոր է Իր արարքներով»** Քանի որ «ահավոր» (BDB 431) տերմինի հետ կապված մի տերմին է կիրառված 2 Օրին. 4:34-ում (BDB 432) նկարագրելու Եգիպտոսի պատուհասը, և քանի որ թվում է թե կան շատ ակնարկներ անապատի դեգերման մասին այս Սաղմոսում, շատերը այս գործերը կվերագրեն Ելիցի շրջանին:

❖ **«մարդկանց որդիների համար»** Այս բառացի արտահայտությունը՝ «Ադամի որդիներ» արտացոլում է Աստծո հոգատարությունը բոլոր մարդկանց համար: Ծննդոց 3:15 Իսրայելի համար խոստում չէ (որը դեռ չկար Ծննդոց 12-ում Աբրահամի կանչից առաջ), այլ ամբողջ մարդկությանը: Սաղմոս 63-67 արտացոլում է այս մեծ ճշմարտությունը, ինչպես նաև Եսայի և Հովնան գրքերը:

66:6 «Ծովը ցամաքի վերածեց» Սա հնարավոր է նկատի ունի Ելիցը, Ելից 14 (տես՝ Սաղմ. 106:9), կամ Հեսու 3-ում Հորդանան գետի բաժանումը (տես՝ Հեսու 4:23):

66:7 «Իր ուժով հավիտյան տիրում է» Սա խոսում է այն մասին, որ Աստված է տիրում և իշխում ամբողջ Իր ստեղծած աշխարհի վրա և ոչ թե միայն Իսրայելի (այսինքն՝ 2 Օրինաց 32:8, Սաղմ. 47:7-8, Գործք 17:26, և Մեծ Մարգարեների բաժնում ազգերի վրա Դատաստանի մասին):

❖ **«հավիտյան»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ»

❖ **«Նրա աչքերը դիտում են ազգերը»** Քանի որ սա կարծես թե անձնավորում է ազգերին, շատերը մտածել են, որ սա վերաբերում է ազգային հրեշտակների գաղափարին (տես՝ Մեպտուազինտայի 2 Օր. 32:8-ի թարգմանությունը): Սա նաև կարող է հաստատել ինչպես Սաղմ. 66:7գ-ում է նրանց ապստամբության գաղափարը, ինչպես նաև Սաղմ. 66:9-ում «մեզ կենդանի է պահում» խոսքը հավանաբար Իսրայելին վերաբերող հավաքական խոսք է: Միջկտակարանային շրջանում, երկնային խորհուրդը կազմված էր ազգերի հրեշտակներից: Հրեական գրականության մեջ նրանք կարծես թե Իսրայելի հանդեպ թշնամաբար են տրամադրված և միայն Աստծո սերն է Իսրայելի հանդեպ, որ նրանց պահպանում է բնաջնջումից: Տես Հավելված XIII և XIV, Ալֆրեդ Էդերշեյմի *Հիսուս Մեսիայի կյանքը և ժամանակը*:

❖ **«ապստամբներն իրենք իրենց թող չբարձրացնեն»** MT տալիս է *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, սակայն Մագորեթիկ գիտնականները առաջարկում են լուսանցքում այն

ընթերցվի (*Qere*) որպես *Qal* ԱՆԱԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով: Խարիսխ Աստվածաշունչը այս արտահայտությունը թարգմանում է «որ ապստամբները չբարձրանան Նրա դեմ»: Սա շատ նման է Սաղմոս 2-ին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 66:8-15

**⁸Օրհնեցե՛ք մեր Աստծուն, ո՛վ ժողովուրդներ,
Լսելի դարձրե՛ք Նրա գովաբանությանը ձայնը .**

**⁹Նա մեր հոգին կյանքի մեջ է պահում,
Ու չի թողնում, որ մեր ոտքերը սասանվեն:**

**¹⁰Քանի որ Դու, ո՛վ Աստված, մեզ քննեցիր,
Փորձեցիր մեզ, ինչպես արձաթն են փորձում:**

¹¹Դու մեզ որոգայթը գցեցիր . նեղություն դրիր մեր թիկունքին:

**¹²Մարդկանց արշավել տվիր մեր գլխի վրայով,
Կրակի ու ջրի միջից անցանք, սակայն դու մեզ խոտավետ տեղ հանեցիր:**

**¹³Ողջակեզներով են մտնելու Քո Տունը,
Կատարելու են ուխտերս,**

**¹⁴Որոնք շրթունքս խոստացան,
Ու նեղությանս մեջ բերանս խոսեց:**

**¹⁵Պարարտ կենդանիների ողջակեզներ են մատուցելու Քեզ՝
Խոյերի անուշ բուրմունքով . ցլեր են զոհելու նոխազների հետ: Սեյա:**

66:8-15 Այս պարբերությունը նկատի ունի Իսրայելի հանդեպ ՅԱՀՎԵԻ վերաբերմունքը: Նա դատում է նրան, վերականգնելու համար: Բոլոր մարդիկ պետք է ուրախանան Իսրայելի միջոցով, բոլոր ազգերի համար ՅԱՀՎԵԻ փրկագործության նպատակների համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

66:9 «կյանքի մեջ է պահում մեզ» Սա կարող է լինել՝

1. պատմական ակնարկ Եզեկիային, երբ նա գրեթե մահման անկողնում էր և աղոթեց Աստծուն իրեն խնայելու համար: Եսայու միջոցով նրա կյանքը տասնհինգ տարով ավելացվեց (տես՝ 4 Թագավորաց 20):
2. Իսրայելի ազգային կյանքին ուղղված խոսք, երբ նրա վրա անընդմեջ հարձակվում էին Արգասաբեր Մահիկի երկրների թշնամի ազգերը:

Ինչ էլ որ լինի այս խոսքի ստույգ ակնարկը, ակնհայտ է, որ Աստծո յուրաքանչյուրի պահի համար ցուցաբերած հոգատարությունը հավատարիմ հետևորդներին մեր կյանք կոչվող պարզևի բուն էությունն է: Իսկ այն, որ Աստված միակն է, որ կյանքի Տերն է և Նա է կյանք տալիս բոլոր նրանց, ովքեր վստահում են Նրան (այսինքն՝ Սաղմ. 65:5):

❖ **«ու չի թողնում, որ մեր ոտքերը սասանվեն»** Եբրայերեն «սայթաբել» (բառացի՝ «տատանվել», «դողալ», կամ «սայթաբել», BDB 557) տերմինը կարող է կիրառվել՝

1. լծակի վրա որևէ բան տանելու համար (տես՝ Թվոց 4:10, 12, 13:23)
2. բանտարկյալի վզի շուրջ հազգված լուծի համար (տես՝ Նաում 1:13)
3. այստեղ այն ապահովության նկարագրություն է: Մարդու ոտքերը չեն սայթաքի հավատքի ճանապարհի վրա (տես՝ Սաղմ. 55:22, 121:3, ԲԱՅԸ Սաղմ. 15:5, 112:6-ում):

Այս արտահայտությունը ճիշտ հակառակն է եբրայերեն «հավատք» բառի համար, որը սկզբնապես նշանակում էր «կայուն դիրքորոշում» (տես՝ Սաղմ. 17:5, 38:16, 121:3):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎԱՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ, ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ

66:10 «Քանի որ Դու, ո՛վ Աստված, մեզ քննեցիր» Այս հասկացությունը վերցված է մետաղները փորձարկելու, ստուգելու ընթացակարգից (տես՝ Սաղմ. 66:10բ): Աստված քննում է Իր զավակներին

(տես՝ Ծննդ. 22:1, Մատթ. 4:1): Նա դա անում է մեզ մաքրելու, սրբացնելու և ավելի ուժեղ դարձնելու համար (տես՝ Չաք. 13:9, 1 Պետ. 1:7):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾ ԱՏՈՒԳՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

66:11 «Դու մեզ որոգայթը գցեցիր» Ուշադրություն դարձրե՛ք, թե քանի անգամ է «Դու» բառը հայտնվում Սաղմ. 66:10-12-ում (տես՝ Սաղմ. 65:9-11): Սաղմոսերգուն հիշեցնում է ՅԱՀՎԵԻ դատաստանի գործերը, որոնք նախատեսված են Իր ժողովրդին ապաշխարության վայր հասցնելու համար, որպեսզի Նա կարողանա օրհնել նրանց (տես՝ Սաղմ. 66:12գ):

«Ցանց, որոգայթ» (BDB 845) բխում է մի արմատից, որը նշանակում է «որսալ» (BDB 845 II, տես՝ Եզեկ. 13:21) և հաճախ կիրառվում է կենդանիների թակարդի համար (տես՝ Եզեկ. 12:13, 17:20): Այս տերմինը կիրառվում է Ամբակում 1:15-17-ում՝ նկարագրելու Բաբելոնացիների ռազմական մեքենան: Հետևաբար այն կարող է հղում լինել Իսրայելի վրա հարձակման համար:

Այս տերմինի մեկ այլ կիրառությունը «ամրոցի» գաղափարն է (BDB 845 II, տես՝ Սաղմ. 31:3, 71:3, 91:2, 144:2): Սա փոխանցում է լիովին տարբերվող իմաստ, երբ թարգմանվում է Սաղմ. 66:11-ում:

❖ **«նեղություն դրի մեր թիկունքին/մեջքին»** «Նեղություն, բեռ» (BDB 734, KB 558, ՀԿ-ում միայն այստեղ է) տերմինը ավելի շուտ արգելք է, քան կշռի՝ ծանրության գաղափար: BDB սահմանում է այն որպես «ճնշում» կամ «նեղություն»: Մեջքը մարդու մարմնի ամենաուժեղ մկաններն ունի և հաճախ կիրառվում է որպես մարդու ուժի փոխաբերություն (տես՝ 2 Օրինաց 33:11):

66:12 «Դու մարդուն մարդկանց արշավել տվիր մեր գլխի վրայով» Սա մի փոխաբերություն է, որը նկարագրում է չար մարդկանց (այսինքն՝ հեթանոս ազգերի) վերահսկողությունը Աստծո ժողովրդի վրա (տես՝ Եսայի 51:23):

❖ **«կրակի ու ջրի միջից անցանք»** Մրանք երկուսն էլ փոխաբերություններ են, որոնք խոսում են դժվարին փորձությունների մասին: Տես Եսայի 43:2-ի գեղեցիկ հայտարարությունը, որ Աստված չի թողնի մեզ մեր փորձությունների մեջ:

❖

NASB	«առատության տեղ»
NKJV	«հարուստ լիության մեջ»
NRSV	«ընդարձակ վայր»
TEV	«ապահով վայր»
NJB	«դարձյալ շնչելու»
JPSOA	«բարգավաճման մեջ»
REB	«լիության վայր»
LXX	«հիշեցնելու» կամ «թարմեցնելու»

Այս տերմինը (BDB 924, KB 1201) շատ դժվար է թարգմանել: Հիմնական իմաստն է գտել: Այն նույն տերմինն է, որը օգտագործվում է Սաղմ. 23:5-ում «բաժակի լեցունության» համար: Այն երբեմն թարգմանվում է «լայնարձակ վայր» (տես՝ Սաղմ. 18:19, 31:8, 118:5), որը նշանակում է հանգիստ վայր կամ «պտղաբեր, արգասաբեր տեղ», նկատի ունենալով Խոստացված Երկրին: Այդ թարգմանությունները, որոնք ներառում են «հանգիստ» բառը, հիմնականում պատճառը երբայերեն մի տառի փոփոխությամբ է տեղի ունենում (տես՝ NET Աստվածաշունչ, էջ՝ 931, #7):

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 287) տալիս է «գտել» բառին “B” գնահատական (որոշ չափով կասկածելի) և նշում է, որ ունի երկու նշանակություն:

1. առատություն
2. հանգիստ կամ ազատ շնչել

66:13-15 Այստեղ է, որ հեղինակը (տես՝ Սաղմ. 66:16բ, կամ Իսրայելը որպես հավաքական իմաստով) գալիս է գոհության գոհ մատուցելու և իր ուխտը՝ երդումը կատարելու (տես՝ Թվոց 30:2, 2 Օրինաց 23:21-23):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 66:16-20

16Եկե՛ք, լսեցե՛ք դուք՝ ամենքդ, որ վախենում եք Աստծուց,
Ու պատմե՛մ, թե ինչ արեց իմ անձի համար:
17Բերանովս Նրան աղաղակեցի, ու լեզվովս Նրան մեծարեցի:
18Եթե սրտիս մեջ անօրենություն տեսնեի,
Տերը ինձ չէր լսելու:
19Սակայն Աստված լսեց ինձ, իմ աղոթքի ձայնին ունկնդրեց:
20Օրհնյալ լինի Աստված, որ իմ աղոթքը չմերժեց,
Ո՛չ էլ Իր ողորմությունն ինձանից:

66:16 «Եկե՛ք, լսեցե՛ք դուք՝ ամենքդ, որ վախենում եք Աստծուց» Այս արտահայտությունը սկսում է երկու *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ (տես՝ Սաղմ. 66:5-ի գրառումը): Աստվածաշունչը չի սովորեցնում համայնականություն, այլ սովորեցնում է Աստծո համընդհանուր շնորհքի գոհը բոլոր նրանց համար, ովքեր կարձագանքեն (տես՝ Հովհ. 1:12, 3:16, 36, 6:40, 11:25-26, Հռոմ. 10:9-13): Աստված պատասխանում է բոլոր նրանց, ովքեր պատասխանում են Իրեն: Սակայն ուշադրություն դարձրե՛ք պայմանը. «ամենքը, որ վախենում են Աստծուց»:

❖ «**ու պատմե՛մ, թե ինչ արեց իմ անձի համար**» Ինչպես Սաղմ. 66:9 արտահայտում է Իսրայելի հավաքական կյանքը, այնպես էլ Սաղմ. 66:13-15 և 16-20 արտահայտում է այս մեկ երկրպագուի անհատական կյանքը (այսինքն՝ սաղմոսերգուի): Նա նկարագրում է իր աղոթքի կյանքը: Սովորաբար Սաղմոսները սկսում են անհատական և ավարտվում հավաքական փառաբանությամբ, սակայն այս Սաղմոսը հակառակն է:

66:17 Քանի որ ՀՄԱ-ում չկար լուռ ընթերցանություն, այնպես էլ չկար լուռ աղոթք (տես՝ 1 Թագ. 1:13):

66:18 Վերաբերմունքը կարևոր է: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՂՈԹՔ, ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ, ՄԻՆՉՂԵՌՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ: Մարդու չխոստովանված մեղքը կուրացնում է անհատի կողմից Աստծո ներկայության և սիրո հանդեպ: Մեղքն ունի հետևանքներ ժամանակի և հավիտենության մեջ՝ թե՛ անհավատի և թե՛ հավատացյալի համար:

66:19 Հավատարիմ հետևորդները հավատում են, որ Աստված լսում է (տես՝ Սաղմ. 18:6) և կպատասխանի ճիշտ կերպով: Սա հավատքի երաշխիք է, որ թե հաստատություն:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԱՇԽԻՔ
SPECIAL TOPIC: ASSURANCE**

Ա. Կարո՞ղ են արդյոք Քրիստոնյաներն իմանալ, որ փրկված են (տես՝ 1 Հովհ. 5:13): 1 Հովհաննեսն ունի երեք ստուգում կամ ապացույց:

1. Վարդապետական (հավատք, 1 Հովհ. 1:1,5,10, 2:18-25, 4:16, 14-16, 5:11-12)
2. Ապրելակերպը (հնազանդություն, 1 Հովհ. 2:2-3, 2:3-6, 3:1-10, 5:18)
3. Սոցիալական (սեր, 1 Հովհ. 1:2-3, 2:7-11, 3:11-18, 4:7-12, 16-21)

Բ. Երաշխիքը դարձել է հարանվանական հարց՝

1. Ջոն Կալվինը հիմնավորում է երաշխիքը Աստծո ընտրության վրա: Նա ասում էր, որ մենք երբեք էլ չենք կարող վստահ լինել այս կյանքում:

2. Ջոն Ուեյլին հիմնավորում էր երաշխիքը կրոնական փորձառության վրա: Նա հավատում էր, որ մենք կարողություն ունենք ապրելու գիտակցված մեղքից վեր:
3. Հռոմի Կաթոլիկները և Քրիստոսի Եկեղեցին հիմնավորում են երաշխիքը հեղինակավոր Եկեղեցու վրա: Մարդու եկեղեցական պատկանելիությունը վճռորոշ է երաշխիքի՝ վստահության համար:
4. Ավետարանականներից շատերը հիմնավորում են երաշխիքը Աստվածաշնչի խոստումների վրա, որոնք կապված են հավատացյալի կյանքում (այսինքն՝ ամենօրյա Քրիստոսակերպությունը) Հոգու պտղի հետ (տես՝ Գաղ. 5:22-23):

Գ. Հավատացյալի առաջնային երաշխիքը կապված է Եռամեկ Աստծո բնավորության հետ՝

1. Հայր Աստծո սերը՝
 - ա. Հովհաննես 3:16, 10:28-29
 - բ. Հռոմեացիների 8:31-39
 - գ. Եփեսացիների 2:5, 8-9
 - դ. Փիլիպպեցիների 1:6
 - ե. 1 Պետրոս 1:3-5
 - զ. 1 Հովհաննես 4:7-21
2. Որդի Աստծո գործերը՝
 - ա. մեր համար մահը՝
 - 1) Գործք 2:23
 - 2) Հռոմեացիների 5:6-11
 - 3) 2 Կորնթացիների 5:21
 - 4) 1 Հովհ. 2:2, 4:9-10
 - բ. քահանայապետական աղոթքը՝
 - գ. մշտական բարեխոսությունը՝
 - 1) Հռոմեացիների 8:34
 - 2) Եբրայեցիների 7:25
 - 3) 1 Հովհաննես 2:1
3. Հոգի Աստծո ծառայությունը՝
 - ա. կանչը (Հովհ. 6:44,65)
 - բ. կնքումը
 - 1) 2 Կորնթացիների 1:22, 5:5
 - 2) Եփեսացիների 1:13-14, 4:3
 - գ. երաշխավորումը՝
 - 1) Հռոմեացիների 8:16-17
 - 2) 1 Հովհաննես 5:7-13

Դ. Սակայն մարդիկ պետք է արձագանքեն Աստծո հետ ուխտի առաջարկին (թե՛ սկզբնապես և թե՛ հարատևորեն)

1. հավատացյալները պետք է ետ դառնան մեղքից (ապաշխարություն) և դառնան դեպի Աստված՝ Հիսուսի միջոցով (հավատքը)
 - ա. Մարկոս 1:15
 - բ. Գործք 3:16, 19, 20:21
2. հավատացյալները պետք է ընդունեն Աստծո առաջարկը Քրիստոսով (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Ի՞նչ է նշանակում «ընդունել», «հավատալ», «խոստովանել՝ դավանել», «կանչել»):
 - ա. Հովհաննես 1:12, 3:16
 - բ. Հռոմեացիների 5:1 (իսկ անալոգիայով՝ 10:9-13)
 - գ. Եփեսացիների 2:5, 8-9
3. հավատացյալները պետք է շարունակեն հավատքով (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Հարատևություն):

- ա. Մարկոս 13:13
- բ. 1 Կորնթացիների 15:2
- գ. Գաղատացիների 6:9
- դ. Եբրայեցիների 3:14
- ե. 2 Պետրոս 1:10
- զ. Հուդա 20-21
- է. Հայտնություն 2:2-3,7,10,17,19,25-26, 3:5,10,11,21

Ե. Երաշխիքը՝ վստահությունը դժվար է, քանի որ՝

1. հաճախ հավատացյալները հետամուտ են լինում որոշակի փորձառությունների, որոնց խոստումը չունեն Աստվածաշնչից
2. հաճախ հավատացյալները չեն ավետարանը լիովին չեն հասկանում
3. հաճախ հավատացյալները շարունակում են գիտակցաբար մեղք գործել (տես՝ 1 Կորնթ. 3:10-15, 9:27, 1 Տիմ. 1:19-20, 2 Տիմ. 4:10, 2 Պետ. 1:8-11)
4. որոշ մարդկային տեսակներ (այսինքն՝ պերֆեկցիոնիստները) երբեք չեն կարողանում ընդունել Աստծո անվերապահ ընդունելությունն ու սերը
5. Աստվածաշնչում կեղծ դավանության օրինակներ կան (տես՝ Մատթ. 13:3-23, 7:21-23, Մարկոս 4:14-20, 2 Պետ. 2:19-20, 1 Հովհ. 2:18-19, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Ուխտադր-ժություն):

Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Քրիստոնեական վստահություն այս վարդապետության մեկ այլ ուրվագծով:

66:20 «Օրհնյալ լինի Աստված» Օրհնությունը (BDB 138, KB 159, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 68:35) բխում է Աստծուց և դեպի Աստված է: Առանց Նրա ոչ մի օրհնություն չկա: Նա պետք է օրհնվի, փառաբանվի հետևյալ բաների համար՝

1. թե ով է Նա (տես՝ Սաղմ. 66:10-12, 2 Կորնթ. 1:3)
2. թե ինչ է արել Նա (տես՝ Սաղմ. 66:1-3)
3. թե ինչ է անում Նա
4. ինչ է կատարելու հետո (տես՝ Սաղմ. 66:4,8):

❖ «ողորմություն» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED)

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է Սաղմոս 66-ը կապված Սաղմոս 65 և 67-ի հետ:
2. Ինչո՞ւ է Սաղմ. 66:3 այդքան դժվար թարգմանել:
3. Արդյո՞ք կա որևէ սուրբգրային վկայություն ազգային հրեշտակների մասին (տես՝ Դանիել 10):
4. Ինչո՞ւ է Աստված քննում անհատներին և ազգերին:
5. Թվարկե՞ք այն երևույթները, որոնք կապված են Սաղմ. 66:17-20-ում աղոթքի հետ: